ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՍԵՎԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՈՑՈՒՄ

Հունիսի 15-ին Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում ևս ուսումնական տարվա փակման հանդիսավոր արարողություն էր:

Արարողությանն իրենց մասնակցությունն էին բերել կրթօջախի նախկին շրջանավարտներ, Մայր Աթոռից ժամանած միաբան հայրեր, դասախոսներ և հյուրեր:

Հանդիսության ընթացքում ներկաներին ողջունեց Դպրանոցի նորանշանակ տեսուչ Տ. Գարեգին աբեղա Հարությունյանը՝ մասնավորապես նշելով. «Զարմանք ապրեցի և միևնույն ժամանակ հիացա՝ տեսնելով Սևանի խստաշունչ ձմեռվա ու Դպրանոցի սուղ պայմաններում ապրող ուսանողությանը, որոնք աննկուն ոգու դրսևորմամբ ուսանում են և իրենց աղոթքը բարձրացնում առ Աստված: Մեր երախտագիտությունն ենք բերում բոլոր այն անձանց, ովքեր նպաստել են այս աննկուն ոգու կերտմանը»:

Ուսման ընթացքում վազգենյանցիներն ակտիվորեն մասնակցում են նաև Գեղարքունյաց թեմի հոգևոր կյանքին ու սպասավորությանը: Այս առիթով թեմի առաջնորդական տեղապահ Տ. Դերենիկ վրդ. Դավթյանն ընդգծեց Դպրանոցի կարևոր նշանակությունն ու առաքելությունը թեմական կյանքում:

Դպրանոցի 16 շրջանավարտներն արդեն իսկ հաջողությամբ հանձնել են ամավերջյան քննությունները և եկող տարի իրենց ուսումը կամբողջացնեն Գևորգյան Հոգևոր Ճեմարանի ավարտական լսարանում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ